



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց*

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՐՐՈՐԴ ՔԱՐՈՋՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

(Լուսավորություն Գողթան, Սյունյաց և Վրաստանի)

§ 1

Մեսրոպի երրորդ քարոզչական գործունեությունը տարածվում է Հայաստանի Գողթան և Սյունյաց գավառները և սրանց սահմանակից Վրաստան աշխարհը: Մեսրոպ հրամանատար Սահակից, որպեսզի այս երկրների բարբարիկ ժողովրդի մեջ քարոզության սկսի. «Յետ այնորիկ առնայր հաւանութիւն երանելին Մաշտոց, որպէս զի Տէր եպիսկոպոսն ի Կայենականսն, և նա ի սփիւռս հեթանոսաց զրանն կենաց սերմանիցեն»:

Կորյունի այս խոսքը մութ է և չի հասկացվում, թե ո՞վ է «Տէր եպիսկոպոսը» և ի՞նչ բան է Կայենականը: Նախ՝ կարելի է առաջինը ընդունել թե՛ իբր հասարակ անուն և թե՛ իբր հատուկ անուն: Կորյունի առաջին տպագրության մեջ գրված է տէր, որով ո՞չ թե հատուկ անուն, այլ պատվանուն է իմացվում, իսկ երկրորդ հրատարակության մեջ (1894 թ.) դառնում է Տէր (իբր հատուկ անուն): Տէր իբրև հատուկ անուն անսովոր չէր 5-րդ դարի Հայոց մեջ, այսպես ունենք Տէր (կամ նաև Տրայր) Խորհնացի (Փարպեցի, էջ 41) և նույն կամ ուրիշ Տէր անունով մեկը, որին նախանձուր կրոնավորները «անհանգիստ հալածանք վախճանեցուցին» (Փարպեցի, Թուղթ, էջ 609): Տէր իբրև հասարակ անուն են

հասկանում Ստ. Նազարյան («Հիստորիա», 1860 թ., էջ 244), Գարագաշյան («Քննական պատմություն», հատ. Դ, էջ 25), Գ. Փառնակ («Անահիտ», 1905 թ., էջ 206), Նահապետյան («Բազմավեպ», 1913 թ., էջ 141), Յնտղյան («Կորին», էջ ԺԵ և 27), Թորոսյան («Բազմավեպ», 1931 թ., էջ 466), Ակինյան («Հանդես ամսօրեայ», 1935 թ., էջ 475 և 523) և վերջին անգամ Արեղյան («Սովետական գրականություն», 1941 թ., № 2, էջ 48ա), որոնք բոլորը «տէր եպիսկոպոս» ասելով հասկանում են Սահակ կաթողիկոսին:

Հարց է, թե կարելի՞ էր Սահակ կաթողիկոսի անունը այսպիսի անշուք մի ձևով տալ: Սրան էլ պատասխանում է Թորոսյան՝ դրական կերպով. նա հիշում է Կորյունից երկու հատված, որոնց մեջ նույնպես Սահակ կաթողիկոսը հիշվում է լուկ եպիսկոպոս տիտղոսով. «Յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ և թագաւորին Հայոց» (էջ 30). «Աղդ լինէր թագաւորին (= Վառաշապուհ) և սրբոյ եպիսկոպոսին (= Սահակ)» (Կորյուն, էջ 21):

Մնում է իմանալ, թե ի՞նչ է Կայենականը:

Այս բառով Ստ. Նազարյան (անդ) հասկանում է «մայր Արարատյան աշխարհը», Գարագաշյան հասկանում է «բուն Հայք»։ Մխրճյան («Հանդես ամսօրեայ», 1902 թ., մայիս) «Կայէն բերդի շրջակայքը»։ Փառնակ = Յնտղյան ղենում է պահլավերեն kayanik «թագավորական» բառի հետ նույն (արմատն է kay «թագավոր»)։ Նահապետյան «կայանք

* Շարունակված ամսագրի 1954 թվականի № № XI-ից, XII-ից, 1955 թվականի № № I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի № I-ից:

թագաւորաց»։ Թորոսյան («Թագաւորէար», 1931 թ., էջ 467) ասում է, թէ շատ է որոնել Կայենական անունով մի գավառ, բայց չի գտել. ուստի ուղղում է այդ բառը «ի հայրենականան» կամ «ի կայս հայրենականան» կամ «ի կայս արքունականան»։ Ակիրնյան էլ Կայենականէ մտերով հասկանում է «ի կայս հայրենականան ?», այն է Արարատ, Տարոն և Վասպուրական նահանգները, որոնցից առաջին երկուսը հայրապետական կալված էին արդեն։ Իսկ Արեղյան կայենական ասելով հասկանում է «Այրարատի գորակայաններում կենտրոնացած մարդկանց»։ Կարելի էր նաև Կայենական բառը, քանի որ այդ անունով գավառ չկար հին Հայաստանում, կապել Կամիենական նախարարական տոհմի հետ։ Այս տոհմանունը հիշում է Բուզանդը։ Այս տոհմից էին Վարդգ իշխան Կամինական, մին այն քաջ իշխաններից, որոնք Օշականի առջև սարսափելի կոտորած տվին Մաղթթայ Սանեսան թագավորին և իրեն ընկերակցող 12-ից ավելի կովկասյան ցեղերին (Բուզանդ, Գ ժ)։ Նույնպես Գնիթ իշխան Կամինական, որ Հաշտենից գավառի կառավարիչն էր և եղավ մին այն 12 նախարարներից, որ Հուսիկին Կեսարիա տարան՝ կաթողիկոսական ձեռնադրության համար (Բուզանդ, Գ ժ)։ Բայց ի կայենականէն (նախորդիվ հայցական ձևով) չի կարող տոհմանուն նշանակել, այլ միայն «տեղ, վայր»։ ուստի բանասերների մեծ մասի հետ մնում է ընդունել, թէ Մահակ և Մեսրոպ համաձայնության եկան, որպիսզի Մահակ քարոզի Այրարատում, իսկ Մեսրոպ գնա քարոզելու Հայաստանի հյուսիսային բարբարիկ գավառներում։

Մեսրոպին ընկերանում էին նաև մի քանի աշակերտներ՝ իբրև օգնական։ Սրանցից երկու գլխավորների անունը հիշում է Կորյունը, այն է՝ «առաջնուն» Տիրայր անուն ի նորձեհական գաւառէն, և երկրորդին Մուշէ անուն ի նահանգէ Տարօնոյ։ Բայց մյուսներին զժրախտաբար զանց է անում համառոտության համար, ասելով «հանդերձ այլովք ևս սպասատրոք անւտարանին, զոր շեմք բաւական ըստ անուանցն նշանակել»։

Ամբողջ խումբը հրաժեշտ տալով Սահակին, Վաղարշապատից ճանապարհ ընկավ և դիմեց գեպի Գողթն գավառը։

Անձանոթ չէր Գողթն գավառը Մեսրոպին. այստեղ էր սկսել նա իր առաջին քարոզչական գործունեությունը, այստեղ էր աշխատել նա ընաչինջ անկու հեթանոսական թաքուն աղանդը և վերջապես այստեղ էր հղացել նա հայերեն գրերը երկնելու մեծ գաղափարը։ Տակավին ողջ էր այն գավառի բարեպաշտ իշխանը Շաբաթ, որ Մեսրոպի առաջին քարոզության ժամանակ այնպես հավա-

տարիմ օգնական և ձեռնառու էր եղել լուսավորությունը տարածելու համար։ Այժմ հասել էր նաև Շաբաթի որդին Պիա կամ Գյուտ, որ հորը նման բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր։ Նրկուն էլ շինաչեցին իրենց շանքը և Մեսրոպին ընծայեցին բոլոր հնարավոր միջոցները՝ քարոզության հաջող վախճանի համար։ Մեսրոպ ման եկավ ամբողջ գավառը, ամեն կողմ քարոզեց, լուսավորություն սրբուհեց ամեն կողմ և ամեն մի գյուղի մեջ նշանակեց վանականների խմբեր, որոնք իր սկսած գործը իրենից հետո պիտի շարունակեին, ուսումը, գիրն ու գրականությունը և կրոնը տարածելով ամենուրեք։

§ 2

Ավանդությունն ասում է, թէ Մեսրոպ իր առաջին կամ երկրորդ քարոզչության ժամանակ Գողթն գավառի մեջ՝ բնակվել է այժմվա Մարվանիս գյուղը, ուր հիմնել է Գրիգոր Լուսավորչի անունով մի վանք, որ բազմաթիվ վերանորոգություններից հետո, մնում է այժմ էլ և կոչվում է տեղական զոկերեն բարբառով նույնպես Մրսրվաճիս, այն է «Մեսրոպականք»։ Այս վանքի և նրա գտնված համանուն գյուղի վրա բավական ընդարձակ տեղեկություն է տալիս Ն. Կայանը՝ «Աղագորական հանդես»-ի ԺԱ դրում, էջ 323—326, ուր զետեղված են նաև քաղղի ու վանքի նկարները։ Այդտեղից ենք ջաղում հետևյալ տեղեկությունները բառացի։

Գողթն գավառի Բաւաճո՛ր կոչված ձորի ամենավերին մասում գտնվում է Նյուրգաւտ գյուղը, որից ցածր գալիս են հետզհետե նուրստ, Աղնամիր և Ալլահի գյուղերը։ «Ալլահից դեպի Արեւելք, հազիվ 5 վերստ հեռու գտնվում է Մեսրոպական կամ Մարվանիս և կամ ռուսերեն՝ Նասիրվազ կամ Նասիր-արաղ կոչված գյուղը։ Պատմական դարեւոր ավանդությունն ասում է, թէ այս գյուղն է այն վաղեմի սրբավայրը, ուր սուրբ Մեսրոպը, հալածելով նախնի կոռուպչաւտութեան մնացորդները, հիմնել է այն փոքրիկ եկեղեցին, որ թեպետ նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչու անվան, բայց և այնպէս՝ հիմնադրի, Ս. Մեսրոպի անունով այժմ էլ կոչվում է Մեսրոպական և Մարվանիս։ ...Այս Մարվանիս գյուղը զետեղված է Ալագյազ լեռան լանջին։ Նրկու փոքրիկ վտակներ՝ Ալագյազի և Զառնապետի՝ հոսելով գյուղի արևմտյան և արևելյան կողմերում, թափվում են գյուղի հարավային կողմից հոսող Մարվանուց գետակը, որ սկիզբն է առնում Գլամի-ղայա լեռից։ ...Գյուղի արևմտյան կողմը, Ալագյազ վտակի աջ ափին, մի փոքրիկ հարթութեան վրա, արդեն կիսավեր պարսպով մեկուսացած, բարձրանում է այն փոքրիկ վանքը, ուր

սուրբն Մեսրոպը ազդեցել է Հայաստանի լուսավորության համար և քարոզել հետեւելու իրեն օրինակին: Սա դարերի ընթացքում մի քանի անգամ վերաշինված և հասարակ բարոյ կառուցված մի շենք է: Չորս սյուների և ութ կիսասյուների վրա բոլորում են արարական կամարներ, կրելով ութ պատուհանավոր մի մեծ գմբեթ և սրա մոտ՝ մի շատ փոքր: Ունի մկրտության ավազան և սրա մոտ ու հանդեպ՝ նույնանման բացվածքներ: Խորաններն երկուս են... Պատուհանները շատ նեղ են և կորած, յուրաքանչյուր պատին՝ 3 հատ: Միակ արևմտյան դուռը բացվում է չորս սյուների վրա հաստատված թաղակապ գավթի մեջ...: Նկեղեցու երկարությունն է 6 սառն, լայնությունը 3 սառն և 2 արշին, իսկ բարձրությունը հինգ սառնից փոքր ինչ ավելի: Կան մի քանի արձանագրություններ, որոնցից հնագույնն է ԶԹ=1460 թվից: Այժմ այս վանքը համարվում է գյուղի ծխական եկեղեցի և բավական խնամքով պահպանվում է Ս. Թարգմանչաց տոնին շրջակա Ալլահի, Բիստ, Փառակա, Յղնա և Ռամիս գյուղերից բազմաթիվ ընտանիքներ ուխտի են գալիս այս վանքը: Իրենք մարմանեցիները իրենց մեջ փող են հավաքում և հասարակական մատաղ անում: Ահագին բազմություն միասին նստում է վանքի գավթի առաջ և ուտում հասարակական մատաղը: Գյուղի բնակիչները թեև բնիկներ են համարվում և խոսում են Սրեանի բարբառին մոտիկ մի բարբառով, սակայն Ս. Մեսրոպին մասին չեն պահպանել մի որևէ ավանդություն: Բոլորի գիտեցածն էլ մեր պատմագիրների հաղորդածներն են»:

Ինչպես տեսանք, բավական երկար է խոսված գյուղի և վանքի նկարագրության վրա. բայց դժբախտաբար ավանդության մասին շատ համառոտ և նույնիսկ բոլորովին անբավարար ձևով: Որտեղի՞ց է բաղված արդյոք այն տեղեկությունը, թե Մարվանիսն է եղել Մեսրոպի բնակավայրը և թե այստեղ գտնված եկեղեցին նույնիսկ Մեսրոպի հիմնածն է: Արդյոք բուն ժողովուրդը պատմում է այսպիսի բան և ի՞նչպես, թե արդյոք հատուկ անունների ստուգաբանության վրա է հիմնված: «Մշակ» լրագրի 1904 թվի 84 համարում կա «Աղագրական կուրիոզներ» վերնագրով մի հոդված, որի լրացումն է հաջորդ 85 համարում «Նամակ խմբագրության», երկուսն էլ Լ. ստորագրությամբ (իմա՝ Լեո): Այս հոդվածներում ի միջի այլոց շոշափվում է վերի խնդիրը և դիտել է տրվում, թե Լալայանի տեղեկությունը հիմնված է միայն Մարվանիս անվան ստուգաբանության վրա, որ պարունակում է Մեսրոպ բառի առաջին երեք բաղաձայնները: Հոգվածագիրը նկա-

տում է նույնպես, թե Մեսրոպ հետին ձև է և բուն անունն է Մաշտոց. ուստի եթե վանքն ու գյուղն էլ ունենային այնպիսի հնություն, որ վերագրվում է իրենց, անշուշտ այս Մաշտոց ձևից կաղմված պիտի լինեին և ոչ թե Մեսրոպ ձևից: Եզրակացությունն այն է, որ ավանդությունը, եթե երբեք գոյություն ունի, հետին և թերևս շատ նոր ժամանակի բան է, հիմնված Խորենացու վրա:

Ո՛չ Լալայանի և ո՛չ էլ Լեոյի հոգվածում պատմական ցուցում չկա. ուստի հարկ համարեցի նորից պրպտել մեր մատենագրությունը և գտա նույն վանքի հիշատակությունը Հայսմավուրքում՝ մեհեկի ժԳ: Ահա այս հատվածը. «Եւ իշխանքն ընդ իրեարս հակառակէին, զի ոմն կամէր տանել գտուրը մարմինն ի գաւառն Տարօնոյ, որ ծնեայն էր և սնեալ, ի բնիկ գիւղն իւր ի Հացիկ: Եւ ալլ ոմն ի նախակերտեալն իւր վանս ի գաւառն Գողթան, որ դեռ ևս Մասրեվանք կոչի տեղին այն...»:

Ուրեմն ավանդության աղբյուրը Հայսմավուրքն է և վանքի անվան հին ձևն է Մասրեվանք: Ըստ իս այս բառը ծագում է ավելի շուտ մասուր բառից քան թե Մեսրոպ անունից: Հայսմավուրքի պատմությունը բաղված է Խորենացուց (տե՛ս ցածրը, գլուխ ժԳ), որ չկա Մասրեվանք անվան հիշատակությունը: Կարելի է կարծել, թե պատմությունը մնացել է հենց Հայսմավուրքի խմբագրության ժամանակ և հիմնված է միմիայն կեղծ ստուգաբանության վրա (մասուրը դարձնելով Մեսրոպ):

§ 3

Մեսրոպ Գողթնում իր քարոզությունը կատարելուց և դպրոցներ հիմնելուց հետո՝ անցավ սահմանակից Սյունյաց նահանգը, որի համար իզուր են կարծում ոմանք, թե Մեսրոպի առաջին քարոզության ժամանակ վաչեղ էր նրա այցելությունը, ինչպես ցույց տվինք վերը՝ գլուխ երկրորդ, § 7:

Այս ժամանակ Սյունյաց իշխանն էր Վադինակ, որ Կորյունի բառերով «ստուռածասէր հնազանդութեամբ» ընդունելով Մեսրոպին, մեծ օգնություն ցույց տվավ սրան՝ իր առաջադրած նպատակի իրագործման համար: Այս իշխանի օգնությամբ՝ Մեսրոպ կարողացավ ման գալ ամբողջ Սյունյաց նահանգը, մինչև իսկ նրա ամենահեռավոր սահմանները, և հավաքեց հայ մանուկներ՝ իր հիմնած դպրոցում աշակերտելու համար: Ավելի հոգ տարավ Մեսրոպ իր ընտրությունն անել նահանգի ամենից ավելի բարբարոս կողմերից. «առաւել զգազանամիտ զվայրենադոյն զճիւղաբարոյ կողմանցն». որոնց վրա թափելով իր բոլոր խնամքները՝ կարողացավ

հասցնել կրթված կրոնավորներ, «ե այնչափ փոշթի ի վերայ ունելով՝ և դաշկարար սնուցանել և խրատել մինչև ի նոցանց իսկ ի վայրենացն եպիսկոպոս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարգելու» Ամեն կողմ բացվեցին դպրոցներ, վանականների խմբերը ցրվեցին ամեն տեղ և հաստատվելով այդ դպրոցներում՝ սկսեցին ուսում և կրթութուն տարածելու համար կրոնավորների գլուխ և եկեղեցիների տեսուչ նշանակեց Մեսրոպ իր աշակերտներից լավագույնին, որի անունն էր Անանիա կամ Անանիաս, որ նույն Սյունյաց նահանգի վարչերիցից էր և որի համար Կորյուն ասում է «այդ տարի և երեւի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ» Այս Անանիայի համար Օրբելյան ասում է, թե Բենիամին անուն մի ուրիշ անձի հետ՝ Մեսրոպի ընտրյալ աշակերտներից էին և նրա առաջին այցելութեան ժամանակ նշանակված էին իրրե «թարգման և ուսուցիչ»։ «Իսկ սուրբ այրն Աստուծոյ [Մեսրոպ]՝ թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման և ուսուցիչ ընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին և զԱնանիա, (որ և ձեռնադրեցաւ յետոյ լեպիսկոպոսութիւն աշխարհին), ինքն դալ առ սուրբն Սահակ» (Օրբելյան, ԺԴ, էջ 38)։ Բայց թե Սյունյաց առաջին այցելութունը, հետեւաբար Բենիամինի և Անանիայի առաջին նշանակումը ենթադրական են՝ ցույց տվինք արդեն վերը և նորից կրկնելու կարիք չկա։

Եստ որևորված է խոսում Օրբելյան Սյունյաց (ըստ իրեն երկրորդ և ըստ մեզ միակ) քարոզութեան և եպիսկոպոսութեան հաստատութեան վրա, որի համար տալիս է «նախաթոռ Հայոց Պատրիարքին» տիտղոսը։ Ահա Օրբելյանի խոսքերը. «Յկն հՀաս մեզ ճառել զցանկալի և զլաւագոյն իրաց, այսինքն զնորոգութենէ խաւարեալ և խաղանեալ եկեղեցւոյ մերոյ և ամբողջ մետապօլստութեան Սիւնեաց։ Քանզի ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անդոկայ մինչև ցտէրութիւնն Վասակայ իշխանին։ Իսկ ի հայրապետութեան Հայոց մեծին Սահակայ՝ մինչ կրկին նորոգէր զՀայաստանայս, և յամենայն տեղիս շրջէր ուղղէր և ընտր վկարաց եկեղեցւոյ, ձեռնադրեալ զԱնանիա՝ զաշակերտ Մեսրոպայ, թարգմանիչ և լի ամենայն առաքինութեամբ՝ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, նստել ի գահ մետապօլստութեան և կոչիլ նախաթոռ Հայոց Պատրիարքին, որ եկեալ նորոգեաց զերկոտասան դաւառս մեծաւիճակ դաւաղանի իւրոյ։ Իսկ ի բանալ դպրութեանս Հայոց վերին պարգեւօքն ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ՝ ետ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կարգեաց ի վերայ գաշակերտակիցն իւր զԲենիամին։ Եւ փութապէս դա-

մենեան ուսոյց հաշիւէն դպրութեամբ, և արար դիտողս աստուածային կաւկարանաց» (Օրբելյան, ԺԵ, էջ 38—39)։

Օրբելյանի այս պատմութեանից երևում է, թե Անանիա ամբողջ Սյունյաց եպիսկոպոս, իսկ սրա ընկեր Բենիամինը բոլոր դպրոցների տեսուչ նշանակեց։ Վերջինը ստուգութեան շատ կարտու է. սրա մասին ունենք առանձին դիտողութուն, որ տես գլուխ ութերորդ, § 3։ Ուշադրութեան շինք առնում բնավ այն հանգամանքը, որ Օրբելյան Սյունյաց այս երկրորդ քարոզութեանը տալիս է ոչ թե Մեսրոպին, այլ սրա աշակերտ Անանիա եպիսկոպոսին։ Թե այս փոփոխութունը ճարպիկ մի խաղ է, որ Օրբելյան ձևացրել է, տեսանք արդեն վերը (գլուխ երկրորդ, § 7) և նորից բնեւոր կարիք չկա։

Մեսրոպ բավական ժամանակ մնացած պիտի լինի Սյունյաց նահանգում, այնպես որ տեսավ Վասակի Սյունյաց իշխանութեան գլուխ անցնելը՝ Վաղինակից հետո։ Նորընտիր իշխանը՝ դեռ շատ հեռու այն պարսկասիրական քաղաքականութեանից, որ բռնել էր Վարդանանց պատերազմի ժամանակ, բարեպաշտ ու կրոնասեր մի անձ էր, այնպես որ խոնարհ հպատակութեան ցույց տալով Մեսրոպին, ինչպես որդին հորը, կատարեց ինչ որ Մեսրոպ պատշաճ էր համարում։ Հայտնի է Կորյունի տված երեւի գովեստը այս անձի վրա, որից հանված կարեւոր հետեւութեանները Կորյունի գրութեան ժամանակի մասին, տեսանք արդեն վերը. «Յորում ժամանակի պարգեւալ յԱստուծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ բաշն Սիսականն Վասակ, այդ խորհրդական և հանձարեղ և յառաջիմաց, ընտրհատուր իմաստութեամբն Աստուծոյ։ Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իրրե որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, և ծառայեալ ըստ աւետարանին վաւելութեան. մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր» (Կորյուն, էջ 15)։

§ 4

Սյունյաց նահանգում եղած ժամանակ, Մեսրոպ մտածում է նաև Վրաստանի գրական ու կրոնական լուսավորութեան համար։ Այս երկիրն էլ դեռ գտնւի էր այն ժամանակ սեփական գրականութեանից։ Մեսրոպ մտաշաղկապ մի ժամանակ իր երկրի կարտու գավառների պահանջը, անցավ Վրաստան։ Կրթութեան հիմքը սեփական գիրն է. այդ շատ լավ գիտեր Մեսրոպ. ուստի մտածեց նախ և առաջ վրացերեն լեզվի այբուբենն հնարել։ Երկու միջոց կար դրա համար. կամ հայկական այբուբենը փոփոխելով (այսինքն ավելի ձայները հանելով և պակասները լրացնելով)

տալ վրացիներին, և կամ հնարել բոլորովին նոր մի այբուբեն. Մեսրոպ ընտրեց վերջինը. նա հնարեց վրացական այբուբենը, տվեց այդ գրերին հայերենից տարբեր ձև, կարգավորեց ուրիշ շարքով, նշանակեց ընթերցանության օրենքները, և այսպես՝ հայերենից բոլորովին տարբեր մի այբուբեն ձևացնելով՝ պատրաստեց իր պնակիրը. «Աննոյր (սկսեց) կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա ի Տեառնէ. գրէր կարգէր և օրինօք յարդարէր...»:

Մեսրոպի այս վարժուճքի մեջ տեսնվում է այն վեհ ղգացմունքը, որի համեմատ ամեն ժողովուրդ և ամեն անհատ պարտավոր է հարգել մյուս ժողովուրդների ինքնությունը: Ազգակերությունը, որ արդի շատ եվրոպական պետությանց ազգայնական քաղաքականության հիմքն է կաղմում, հեռու էր Մեսրոպի պես մաքուր և ազնիվ անձի մտքից: Լուսավորությունը նա չկապեց նեղ շովինիզմի հետ. ցույց տվեց և բաց արեց առաջագիմություն ուղիղ ճանապարհը՝ սեփական լեզվով դրականությունը:

Մեսրոպ վրացերեն գրերը հնարեց Այսուհայց նահանգում, և իր հետ առնելով իր լավագույն աշակերտներից մի քանիսին, որոնք անշուշտ սլոնեցի էին, անցավ Վրաստան: Այնտեղ ներկայացավ վրաց Բախուր թագավորին և Մովսես եպիսկոպոսին: Թե՛ թագավորը, թե՛ բանակը և թե՛ ժողովուրդը սիրալիր ընդունելություն ցույց տվին Մեսրոպին, ինչ որ Կորյուն «հնազանդեալ» բառով է բացատրում. «Սե՛ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն զաւառօքն» (էջ 15): Մեսրոպ ցույց տվեց նրանց իր շինած վրացերեն գրերը («և նորա զիւր արուեստն առաջի արկեալ»), բացատրեց թե՛ ի՞նչպիսի մեծ օգուտ ունի սեփական դրականությունը. այնուհետև խրատեց և հորդորեց, որ ընդունեն այդ գրերը, սովորեն, տարածեն երկրում և ուսման ու կրթության հոգ առնեն, ինչպես իրենց հարեան հայկական զավառներում: Բայց միայն տեսական խրատները բավական չէին. պետք էր գործնական օրինակով ճանապարհ բանալ: Ուստի Մեսրոպ իր վրա վերցնելով նախաձեռնությունը, խնդրեց, որ աշակերտներ հավաքեն, իսկ ինքը պատրաստ էր կրթել ու դաստիարակել նրանց: Ամենքը համոզվեցին և ընդունեցին առաջարկությունը. «Սե Յորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ խրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զխնդրելին կատարել»: Թագավորը հրաման հանեց և ահա Վրաստանի զանազան կողմերից ու զանազան զավառներից հավաքվեցին վրացի մանուկները, որոնց թագավորը հանձնեց Մեսրոպին: Մես-

րոպ բաց արեց առաջին վրացական դպրոցը: Նա գտավ Զադու անունով մի վրացի, որին Կորյուն կոչում է «այր գրագէտ և ճշմարտահաւատ»: Բայց չի խմացվում, թե այս անձը աշխարհական էր, թե հոգևորական: Վերջինը ավելի հավանական է: Այս անձը վարեց թարգմանչության պաշտոնը Մեսրոպի և վրացի աշակերտների միջև: Կորյուն նրա համար պարգապես ասում է «ղայր մի թարգման վրացերէն լեզուին», իսկ նորինացին՝ «հանդերձ Զադայի ոմամը թարգմանաւ հելլէն և հայ լեզուի»: Հայ լեզվի հմտությունը անուրանալի է, քանի որ Մեսրոպի և վրաց միջև թարգման է. բայց ստույգ է նաև հուսարեն լեզվի գիտությունը, ըստ որում Կորյուն կոչում է նրան «այր գրագէտ»: Հայ գրականությունը դեռ այնքան նոր էր, որ կարելի չէ ենթադրել, թե վրացի Զադան՝ էլ սովորած լիներ. ուստի մնում է հուսարենի հմտությունը, որպեսզի արդարանա Կորյունի «գրագէտ» բառը:

Այս անձի աշակցությամբ ահա Մեսրոպ սկսավ իր ուսուցչական գործը և այնքան կրթեց նրանց քրիստոնեական ուսման մեջ, որ բոլորովին թողեցին ու մոռացան իրենց հեթանոսական զիվապաշտությունը. «Զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեան, և հոգևոր սիրոյն եռանդեամբ՝ զաղա և զժանգ շարաւահոտ դիւացն և զանտիարգործ պաշտամանն ի բաց անջատեալ ի հայրենեաց իւրեանց՝ և անյիշատակ ցուցանել, մինչև ասել՝ թէ՛ Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ»:

Մեսրոպի քարոզչության մասին խոսում է նաև Ուխտանես (գիրք Բ, գլ. Ժ) շատ կարճ հիշատակությամբ. «Սե արդ մի՛ հեղզացուք զսէր հոգևոր՝ որ կայր ի մէջ երկուց ազգաց (Հայոց և Վրաց) նորոգել. և զայն, որ ի միջէ ազրիւթ առեալ է զվարդապետութիւն, որ նախ ինքեանք առին զկենդանութեան լոյսն, որպէս ուսուցին մեզ մարգարէքն և առաքեալքն, և ապա ձեզ և մեզ սերմանեցին առհասարակ զուղղափառ աստուածապաշտութիւն, նախ երանելին սուրբ Գրիգոր և ապա Մաշտոց»: Մաշտոցի անվան միայն հիշատակությունը Գրիգոր Լուսավորչի հետ և այն էլ վրաց լուսավորության գործում, ապացույց է, թե ի՞նչպիսի մեծ դնահատություն էր վաշելով Մեսրոպ այն դարում:

Այսպես ուրեմն կարճ ժամանակում Մեսրոպ կրթությունը տարածելով Վրաստանում՝ լրիստոնեությունը դրավ ամուր հիմքերի:

1. Յնագլան (էջ 32) այս Զադա անունը կապում է հարբերդի քարբառի շաղա «մանուկ» բառի հետ: Այս բառը հասարակ թրքերեն շաղա բառն է և բնավ ամենեին կապ չունի ոչ հայերենի և ոչ էլ վրացերենի հետ:

վրա, Կորյուն Մեսրոպի այս գործին բնծառում է նաև վրացոց ազգային ամբողջության տեսակետով շատ ավելի բարձր ու դնահատկի մի արդյունք, այն է բազմաթիվ բաժանբաժան ցեղերի նյութական կապակցությունը. «նւ արդ զնոսա, որ յայնչափ ի մասնատուր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միտվ աստուածարարբառ պատգամօքն մի ազգ կապեալ փառարանիչք միոյ Աստուծոյ յօրինէր» (Կորյուն, էջ 15): Այս բաժան-բաժան ցեղերը պիտի լինէին բացի բուն վրացիներից՝ խմերները, գուրիացիները, աշարացիները, մինգրեկները, խեսուրները, թուշերը, փշավները, ավանները, ինգիլունները, ինչպես նաև լազերը (վրացական անվանակոչությամբ ճանները) և արխաղները: Կորյունի նշանակած միությունը անշուշտ ուրիշ բան չէ, եթե ոչ, նախ՝ կրօնական, հոգևոր միություն, իրրե բոլորն էլ անգամ միևնույն վրացական ազգային եկեղեցու, և երկրորդ՝ լեզվական միություն, իրրե բոլորն էլ գործածող միևնույն ծիսական լեզվի, որ պաշտոնական նշանակություն էր ստացած և զրականությամբ ապահովված: Վերջին կարծիքը հաստատում է վրացի գիտնական Մովսես Զանաշվիլի (տե՛ս Հ. Գ. Մենկելշյանի «Արդի լեզվագիտությունը», Վիեննա, 1903 թ., Ա հատ., էջ 104—105), որից բաղում ենք բացի հետևյալ տեղեկությունները. «Հայտնի է, որ ամենահին ժամանակները թե՛ մինգրելները և թե՛ ալանները, թե՛ արխաղները, թե՛ ոսեթներն՝ իրենց կրօնական պաշտամունքը վրացերեն լեզվով կկատարեին և առաջին երկու ցեղերը մինչև հիմա ալ այսպես կվարվին: Այս բոլոր ժողովուրդներումեջ պաշտոնական լեզուն պատմական ժամանակներեն, վրացերենը կհամարվեր, որով կկատարեին իրենց գրավոր փոխադարձ հարաբերություններն և կկազմվեին ու կզրվեին տարեգրությունները, ինչպես նե՛ «Արխաղա Յիսուրերա» («Արխաղիայի կյանքը»), հեղինակություն արխաղաց Բագրատ Գ (+1114) թագավորի, «Ալզուդեանի»՝ պատմական գյուղացիներգություն (երօբե) ու (կամ ոսեթին) ժողովրդյան... և Արխաղիայի, Ոսեթիայի, Չեչենիայի և Դաղստանի տաճարներու վրայի արձանագրություններն ևայլն»:

Վրաստանի ամեն կողմը կրթական ու կրօնական կարգ ու կանոնի տակ զնկուց հետո՝ Մեսրոպ հրաժեշտ է տալիս բոլորին և գտնում Հայաստան. հասնում է Վաղարշապատ մայրաքաղաքը՝ Սահակ կաթողիկոսի մոտ, որին հաշիվ է տալիս իր արած գործերի առթիվ:

55

Վրաստանի լուսավորության այս պատմությունը, որ դրինք, իր ամբողջ մանրամասնությամբ միայն Կորյունն ունի. մյուս պատմագիրները կա՛մ շատ համառոտ են պատմում, կա՛մ անունով միայն հիշում են ու անցնում և կամ մինչև իսկ բոլորովին հապավում են: Վերջին տեսակից է հատկապես Փարպեցին, եթե չհիշենք հետին պատմիչներին: Շատ համառոտ են Փոքր Կորյուն և Սասնեցին. առաջինը բոլորովին նույն է խորենացու հետ, երկրորդը հետաքրքիր է վրացիներին տված տարօրինակ անունով և նրանց դրերին բնծայած վայելչությամբ. «Լասանորոյ գիմէ ի կողմանս Դաղմաւունեաց, այսինքն յազինս Վրացոց. առնէ և նոցա տառ բտալային իւրեանց՝ գեղադէշ և վաչկուշ՝ թողլով ի ծանօթիցն թարգմանս նոցա» (էջ 56):

Իսկ խորենացու բնծայած տարբերությունն այն է, որ նախ՝ իրացերեն դրերի դշուտը եղած է զնում ո՛չ թե Սյունյաց դավառում, այլ բուն Վրաստանում: Երկրորդ՝ այս գյուտին մասնակից է ուզում անել նաև Զաղաթարգմանին, և ձեռնառո՝ Բակուր թագավորին ու Մովսես եպիսկոպոսին. «Իսկ Մեսրոպայ կրթեալ յաշխարհն Վրաց, առնէ և նոցա նշանագիրս տուեցելովն ի վերուստ շնորհան, հաղեկեմ Զաղայիս ոմամք թարգմանա հելլէն և հայ լեզուի. ձեռնառու լինելոյ արքայի նոցա Բակույ, և եպիսկոպոսին Մովսիսի» (Խորենացի, Գ ծղ): Նրան է հետևում նաև Վարդան պատմիչ՝ հետևյալ բառերով. «Այլ սքանչելի ալոն Աստուծոյ Մեսրոպ անցեալ ի Վիրս, առնէ և նոցա գիրս, ի ձեռն Զաղելի ոմեմն, որ աշակերտեցաւ նմա» (էջ 51): Երրորդ՝ նշանակում է, թե Մեսրոպ վրացի աշակերտների խումբը երկու դասի բաժանեց. առաջինը հանձնեց Տեր խորձենացուն և երկրորդը Մուշե Տարսնեցուն՝ ուսուցանելու համար. «նւ ընտրեալ մանկունս, և յերկուս բաժանեալ դասս, և վարդապետս թողու նոցա յաշակերտաց իւրոց զՏէր խորձենացի և զՄուշէ Տարսնեցի» (անդ):

Առաջին տարբերության համար այն պետք է նկատի ունենալ, թե խորենացին, ինչպես հետո մանրամասն պիտի ցույց տանք, Մեսրոպի երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ համբարգրությունները իրար խառնելով՝ առանձին մի ձև է տալիս նրանց. այսպես՝ երրորդ համբարգրության միջից Սյունյաց նահանգը բոլորովին հանում է, իսկ Վրաց և Աղվանից լուսավորությունը. որոնց յուրաքանչյուրը տարբեր շրջանի գործ է, միացնում է մի գլխի մեջ: Այս հանգամանքների տակ խորենացին չէր կարող իհարկե վրացական գրերի գյուտի տեղը նշանակել Սյունիք, և կարճ կապելու

համար ստիպված էր վրաստանը հիշել ու անցնել:

Երկրորդ տարբերությունը թյուրիմացության արդյունք է. ճշմարիտ է, թե Կորյունի պատմության համեմատ Ջաղա, Բակուր և Մովսես օգնեցին Մեսրոպին, բայց նրանց «գնությունը կայանում էր միայն աշակերտների հավաքելու և ուսում տալու մեջ. ո՛չ մեկը չէր կարող օգնել Մեսրոպին վրացերեն գրերի պատրաստության ժամանակ, որովհետև, ինչպես տեսանք, գլուխը եղավ Սյունիքում, ուր չկային ո՛չ Ջաղա, ո՛չ Բակուր և ո՛չ էլ Մովսես:

Խորենացու երրորդ տարբերությունը ներկայացնում է մի քանի մանրամասնություններ, որոնք կասկածելի են լինում ա՛յն պատճառով, որ նախ՝ ուրիշ աղբյուրներում չեն հիշատակված, երկրորդ՝ եթե Մեսրոպ վերակացու թողեց, այդ վերակացուն անշուշտ Ջաղա թարգմանը պիտի լիներ, որ վրացի լինելով ամենահարմար անձն էր, և ո՛չ թե Տեր և Մուշե, որոնց Մեսրոպ իր հետ Գողթն էր տարել և որոնք հաղիվ թե վրացական լեզվին ծանոթ լինեին. ուստի և անհարմար էին վրաստանում վերակացու նշանակվելու: Երրորդ՝ ինչպես հրատարակիչները կարծում են, Տեր և Մուշեից հիշվում է Փարպեցու մեջ՝ իբրև Հայաստանում ապրած և այնտեղ նախանձոտ կրոնավորների հալածանքով վախճանված մի անձ. «Զհրեշտականման այլն զՏէր՝ նոյն անհանգիստ հալածանքով վախճանեցուցին, որք և այժմ դեռ ևս անյագութեամբ քինով ընդ մեռելոյն կագին» (Փարպեցի, էջ 609): Սակայն այս վերջին պատճառարանությունը կասկածելի է, որովհետև ըստ Աբրահամ Զամինյանի (անձնական տեղեկություն) Փարպեցու հիշատակած անձի անունը պետք է կարդալ «տէր Նոյն»:

§ 6

Վերջացնելու համար այս գլուխը, մեզ մնում է քննել մեր հայ աղբյուրների ստուգությունը. արդյոք ճշմարիտ և հավանական են այն տեղեկությունները, որ տալիս են սրանք Մեսրոպի առաքելության վրաստանում և վրացերեն գրերը հնարելու մասին. ի՞նչ ունեն այս մասին վրացական աղբյուրները և ի՞նչ կարծիքի են այժմյան եվրոպացի, վրացի և հայ նոր քննիչները: Աշխատության այս մասի պատրաստության համար իբր աղբյուր են ծառայել՝

1. Brosset, „Histoire de la Géorgie“, 3-րդ հատ., S. Petersbourg, 1849—58.

2. Müller, „Über den Ursprung der Gruzinschen Schrift“, SWAW 137, էջ 1—12.

3. Իսահակ Հարությունյան, «Հայոց գիրը», էջ 378—385, ուր ի նկատի են առնված վրացական եվրոպական աղբյուրներ.

4. Վրացի գիտնական Մովսես Զանաշվիլու մի գրությունը, որ հրատարակված է Հ. Գ. Մենեիշյանի «Արդի լեզվագիտության» մեջ (էջ 103—105).

5. Gardthausen-ի աշխատությունը՝ ZDMG 80, էջ 79.

6. «Հանդէս ամսօրեայ»-ից փոքր մի հոդված՝ «Հայ գրականության վրացիույն վրա ունեցած ազդեցությունը», 1899 թ., էջ 222—223, որ ամփոփում է Ն. Մառի հրատարակած ռուսերեն «ИЗЪ ПОВЕЗДКИ НА АФОНЪ» աշխատությունը:

7. Հ. Ն. Ակինյան, «Կյուրիոն կաթողիկոս», էջ 105:

Վրաց հին մատենագրությունը շատ աղքատ է և համեմատելով մեր մատենագրության հետ՝ գոնե երկու դար ափսիս ուշ է սկսած: Ինչպես մեր, նույնպես և վրաց առաջին գրական հիշատակարանը Ս. Գրքի թարգմանությունն է, որ մեր թարգմանության նման մի անգամից կատարված չէ, այլ մաս-մաս. այսպես՝ Ավետարանը թարգմանված է յոթերորդ դարում, իսկ Սաղմոսները 7—8-րդ դարում՝ հունարեն Տոթանասնից թարգմանության վրայից կատարված և հետո սլավական թարգմանության համեմատությամբ սրբագրված: Հակոբ Տյառնեղբոր Պատարագամատուցը թարգմանված է 768 թվին: Կարելի է կարծել սակայն, թե Ս. Գրքի թարգմանությունը կատարված է նախ հայ թարգմանության վրայից և կամ առնվազն այս վերջինը միշտ ի նկատի առնված է հունարենից թարգմանելու ժամանակ: Այս բանը ապացուցվում է ըստ Մառի՝ «հատուկ անվանց հայերեն ձևերեն, հայերեն ոճերու գործածությունն և այլն, զորս նույնիսկ բազմիցս կատարված Ս. Գրոց սրբագրությունը՝ չեն կրցած բոլորովին խափանել»: Հայերենից են թարգմանված շատ մկայարանություններ, որոնց մի մասը բուն հայ աղագին սրբեր են. ինչպես Սանդուխտ, Ոսկյանք, Սուրբասյանք, Ս. Գրիգոր Լուսավորիչ և թողուք, Նեոսես Մեծ, Մահակ, Աստվածայնք, Վարդան Մամիկոնյան, Շուշան, Դավիթ Դվնեցի և այլն: Սրանով ցույց է տրվում, թե վրաց գրականությունը, ինչպես և աղագային քաղաքական կյանքը, մեծապես կապված է եղել հարևան բախտակից հայ ժողովրդի հետ:

(Շ ա Ր Ո Ւ Ն ա կ ե լ ի)